ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

26.06.2017թ.
01/27-17

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Աղվանյան,

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու 2017 թվականի սեպտեմբերի 18-20-ին Երևանում Մայիսյան հաղթական հերոսամարտերի և Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակի նախաշեմին անցկացվող **«Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին**:

Համաժողովին հրավիրվում են մասնակցելու համահայկական կառույցների ղեկավարներ, համայնքներում գործող կառույցների, կազմակերպությունների նախագահներ, ատենապետներ կամ նրանց ներկայացուցիչները, հասարակական-քաղաքական, հայկական հիմնախնդիրների իրազեկման, մշակութային գործիչներ, բարերարներ, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, համայնքում մեծ դերակատարություն և հեղինակություն ունեցող անձինք, ովքեր զբաղված են հայապահպանության և Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման խնդիրներով:

Համաժողովում նախատեսվում է կազմակերպել ընդհանուր քննարկումներ՝ համազգային առաջնահերթությունների վերանայման և լրացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում Սփյուռքի ներդրումների ակտիվացման, արդյունավետության բարձրացման, Հայաստան-Սփյուռք գործակցության հեռանկարների վերաբերյալ:

Լիագումար նիստերից բացի նախատեսվում է քննարկման առարկա դարձնել հետևյալ թեմաները՝

1. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և Սփյուռքի դերակատարությունը
2. Մայրենի լեզվի և կրթության հիմնախնդիրները Սփյուռքում,
3. Հայոց ցեղասպանությունը վերապրածների չորրորդ սերնդին առնչվող հարցեր
4. Հայկական մշակույթը՝ հայապահպանության գրավական
5. Սփյուռքահայ երիտասարդության ապագայի տեսլականը
6. Հայաստանի ներդրումային դաշտը և Հայաստան-Սփյուռք տնտեսական զարգացման հեռանկարները- ATN հայկական առևտրային ցանցի գործարար 3-րդ ֆորում
7. Արտակարգ իրավիճակներում հայտնված հայության և հայկական համայնքների հիմնախնդիրները,
8. Հայկական հիմնախնդիրների ներկայացումը տեղեկատվական հարթակում

ՀՀ 0010, Երևան, Վ. Սարգսյան 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

tel.: (374 10) 58 91 55
fax.: (374 10) 58 91 57
E-mail: ministry@mindiaspora.am

Թեմատիկ քննարկումների արդյունքները կամփոփվեն համաժողովի երրորդ օրը՝ լիագումար նիստում:

Համաժողովի օրերին կառույցների ղեկավարները հնարավորություն կունենան ներկա գտնվելու **Հանրապետության Նախագահի անունից տրվող ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված ընդունելությանը:**

Խնդրում ենք մինչև հուլիսի 10-ը հաստատել Ձեր մասնակցությունը:

Տեղեկացնում ենք նաև, որ համաժողովի մասնակիցներն իրենք են հոգալու ճանապարհի և Երևանում կեցության ծախսերը, իսկ ՀՀ սփյուռքի նախարարությունը կապահովի համաժողովի կազմակերպչական խնդիրները:

Նախարարությունում գործում է համաժողովի կազմակերպչական աշխատանքները կարգավորող աշխատանքային խումբ՝ ի դեմս Հայրենադարձության և հետազոտությունների վարչության (հեռ.՝ (+374 10) 58-56-01 (604), էլ. փոստ՝ panarmenianforum2017@gmail.com):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

НЕОФИЦИАЛЬНЫЙ ПЕРЕВОД

Уважаемый господин Агванян,

С радостью приглашаем Вас принять участие в 6-ом форуме Армения-Диаспора на тему “Взаимодоверие, единство и ответственность”, который состоится в Ереване 18-20 сентября в предверии 100-летия Первой Республики Армения и майских победоносных сражений.

В форуме примут участие руководители всеармянских организаций, председатели или представители действующих в общинах организаций, общественно--политические, культурные деятели, а также деятели, занимающиеся пропагандой армянских проблем, благотворители, представители СМИ, авторитетные люди, играющие важную роль в общине и занимающиеся проблемами сохранения армянской идентичности и развития партнерства Армения-Диаспора.

В рамках форума планируется обсуждение вопросов пересмотра и дополнения общенациональных приоритетов, а также активизации и повышения эффективности инвестиционных процессов Диаспоры в Республику Армения, перспектив партнерства Армения-Диаспора.

Помимо пленарных заседаний планируются обсуждение следующих тем:

1. Проблема Арцаха и роль Диаспоры,
2. Проблемы родного языка и образования в Диаспоре
3. Вопросы четвёртого поколения переживших Геноцид армян
4. Армянская культура- залог сохранения этнической идентичности
5. Видение будущего молодежи Диаспоры
6. Инвестиционное поле Армении и перспективы экономического развития Армения-Диаспора - третий бизнес-форум армянской торговой сети ATN
7. Проблемы армян и армянских общин, оказавшихся в чрезвычайных ситуациях
8. Представление основных проблем армянства на информационной площадке

Итоги тематических дискуссий будут подведены на третий день форума в рамках пленарного заседания.

В ходе конференции руководителям организаций будет представлена возможность принять участие в официальном приеме Президента РА по случаю 26-ой годовщины независимости.

Просим подтвердить Ваше участие до 30-го июня.

Сообщаем также, что транспортные расходы и проживание оплачиваются самими участниками, а Министерство диаспоры РА обеспечивает организационные вопросы форума.

В министерстве действует рабочая группа по координации организационных вопросов форума – Управление репатриации и исследований (тел: + 374 10 58 56 01 (604) эл.адрес: panarmenianforum2017@gmail.com

С уважением,

ГРАНУШ АКОПЯН